

քազան Մեսրոբ Արքեպիսկոպոսի նուիրեմք գողջոյն եւ օրհնութիւն :

„ Համաձայն յայտարարութեան Զերոյ յ31 յունվարի տարւոյս ընդ համարաւ 50 հաստատելով զհիմնական կանոնս Բուդաղեան վանական երկդասեան ուսումնարանի վանից Ս. Ստեփաննոսի՝ որ ի Սաղիան , առ գերապատուութեանդ, ծանուցանելով միանգամայն թէ՛ դիտմամբ յապաւեցաք ի կանոնաց անտի թէ՛ զյօդուածան՝ զաւելորդս ի մուծանել ի շարս հիմնական կանոնաց , եւ թէ՛ զայնոսիկ՝ որք արդէն գտանին յուսումնարանական կանոնադրութիւնս՝ հրատարակեալս ի մէնջ ի կառավարութիւնն եկեղեցական ծխական յուսումնարանաց մերոց յամին 1886 , իսկ զկոնդակ օրհնութեան մերոյ յանուն քարեպաշտօն եւ ազգասէր եղբարց եւ որդւոց Բուդաղեանց , հանդերձ գոհու. նակութեամբ սրտի մերոյ՝ առաքեսցուք առ գերապատուութիւնդ առ ի հասուցանել նոցին յարգութեանց՝ յետ ստանալոյ մեր զաւետիս քացման յիշեալ ուսումնարանին

Ողջ լերուք ի Տէր:

Հմ. 146

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի 6ն ապրիլ. 1888 ամի Փրկչական

եւ ի թուականութեան մերում ՌՅԼԵ

Ի Ս. Էջմիածին

Իսկ կանոնադրութիւնն է՝ ըստ այսմ .

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

« Կառավարութիւն Բուդաղեան վանական երկգասեան ուսումնարանի վանից սրբոյն Ստեփաննոսի որ ի Սաղիան » :

„ Ա. իրաւամբ չնորհելոյ Բագուաբնակ Բուդաղեան եղբարց զտանն հազար ըուբլիս յապահով կառավարութիւն վանական ուսումնարանի վանից Ս. Ստեփաննոսի որ ի Սաղիան , անուանեսցի այն՝ «Բուդաղեան վանական ուսումնարան Սաղիանի վանից» :

Բ. Յոբրան ժամանակս սահպանեսցի գոյութիւնն , նոյնը վանական ուսումնարանին՝ մին յազգատոհմէ Բուդաղեանց յա-